Վերոբերեալն է, որ, մեր կարծիքով, թոյլ է տալիս ֆրանսիական հիւպատոս Պիքէին յայտարարելու, թէ Նախիջեւանի մի շարք գիւղերում մահմեդականութիւնն արմատաւորուել է «բռնութեամբ»[1]:

Ստորեւ բերում ենք Նախիջեւանի հայ կաթողիկէ համայնքի հետ առընչուող դիմումների համառօտ ժամանակագրութիւնը, որ ցոյց է տալիս ինչպէս այս օրէնքի դաժան գործունէութիւնը, այնպէս էլ նրա դէմ կիրառուած քայլերը.

* 1632 օգոստոս 19 - Պօղոս Փիրոմալլին Ապարաներից տեղեկացնելով շատերի մահմեդականացման մասին, հիշում է, որ ժամանակին Paolo V պապի կողմից այս մասին գրուեց Շահին, խնդրում է նոր միջոցներ ձեռք առնել (SOCG, vol. 103, f. 264v),
* 1633 Luglio 19 - Պապը Սպահանի լատին եպիսկոպոսի միջոցով դիմում է պարսից շահին կասեցնելու այս օրէնքը (Acta, 1633, Luglio 19, vol. 8, f. 267, n. 1),
* 1635 gunii 25 - Հաւատասփիւռ Ժողովին ուղղուած Փիրոմալլիի նամակում նորից խօսւում է այս օրէնքի գործադրմամբ Ապարաներում 15 հայերի մահմեդականացման մասին (Acta, 1635 gunii 25, vol. 10, f. 265, n. 50)
* 1638 giugno 30 - Նախիջեւանի Օգոստինոս Բաջենց արեպիսկոպոսի Սպահանից գրուած նամակում հաղորդում է, որ իրենց համայնքից 3 քրիստոնեայ մահմեդական դարձան՝ «սա է երկրի պայմանը» (SOCG, vol. 118, f. 168v)
* 1657 Luglio 28 - Նախիջեւանի արեպիսկոպոս Պօղոս Փիրոմալլին հաղորդում է որ համաձայն այս օրէնքի Քոնա եւ Սալթաղ գիւղերից 130 ընտանիք իրենց ունեցուածքից չզրկուելու համար դարձան մահմեդական, Ապարաներից 60 ընտանիք եւս «թուրք» դարձաւ: Խնդրում է պապի եւ Իսպանիայի թագաւորի միջամտութիւնը, որպէսզի մահմեդականացողը միայն իր ունեցուածքին տիրանայ, այլ

Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries. Vol. I, London, 1939, p. 288):

1 *Տե՛ս La vie de Messire François Picquet, consul de France et de Hollande à Alep. Paris, 1732, p. 391*: